

Հանրուկառքի մը հաստատման ծախքերուն, ու ջանալ կարդ, ներդաշնակութիւն, խաղաղութիւն հաստատել արտասահմանի հայ և կեղեցական թեմերէն ոմանց մէջ ուր՝ կարգ մը խոռվարար տարրերու ինքնամոլ ու կրքոս արարքներուն հետեւանքով՝ ամօթարեր քառս մը կը տիրէ ատենէ մը ի վեր: Գարեզին սրբազնը, իր անբասիր և կեղեցականի, ջերմ հայրենասէրի և բարձավաստակ զիտունի վեհ գէմքով շատրոնց սիրելի դարձած է բավանդակ Հայութեան և այդ առաքելութիւնը կատարելու ամենէն աւելի կարող անձն էր անշուշտ: Խանդավառ ընդունելութիւնը զոր մոռմանիոյ եւ Պուլկարիոյ մեր գաղութներուն մէջ ան գտաւ արդէն, պիտի զտնէ անտարեկոյս մեր բոլոր գաղութներուն մէջ:

Հայ Հին արուեստի ներհուն ուսումնասիրող, իրեն յանձնուած առաքելութեան պիտի միացնէ նաև անշուշտ — ինչպէս ըրաւ իսկ արդէն մոռմանիոյ եւ Պուլկարիոյ մէջ, — իրեն այնքան ծանօթ այդ նիւթին վրայ զիտական բանափօսութեանց չարքով մը պանդուխտ Հայութիւնը իր աղղային մշակոյթին ինքնայատուկ զեղեցկութեանց մասին լուսաւորելու եւ անոնցմով զայն ողեւորելու անձնական բեղմնաւոր նախաձեռնութիւնը: Ցանկալի է որ այդ մէծ Հայուն երեւումը արտասահմանի մէջ ոչ միայն յանզի իր որոշ ծրագրին լիակատար իրականացման, այլ եւ մզէ արտասահմանի Հայերը կանոնաւոր, մէթոսիկ ու լուրջ ձեւով մը իրենց օգնութիւնը հասցնել Մայր Աթոռին որպէսպի ան իր և կեղեցական-ազգային-ժամանուր գործունէկութիւնը կատարէ ներկայ պայմաններուն մէջ կարելի լզած բոլոր շափովը) ու հետպհնետէ աւելի լայն, աւ ու ատածուն համեմատութիւններով եւ աւելի մէծ ու խանդավառ զոհարերութիւններով մասնակցիլ Հայրենիքի զերաշինութեան էական զործին:

## ՀԱՅ ՏԱՂԱՆԴՈՅ ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

Յատուկ յօդուածով մը Անահիտի այս թիւին մէջ ծանրացայ այն մէծ յաջողութեան վրայ զոր երեք արուեստագէտներ, Ս. Խաչատուրեան, Հրանտ Մուրատեան եւ Սերժ Սարգիսեան ունեցան վերջերս Փարիզի մէջ: Հոսկուլեմ յիշատակել նաև թէ Սարգիսեան տուաւ Փլեյէլ Տան մէջ գաշնակի թեսիրալ մը, որ մէծապէս զնահատուեցաւ փարիզեան երաժշտական քննագատներու կողմէ: Ունեցանք նոր համերգ մը յայտնի երգահան Արայ Պարթեւեանի, որուն ինքնատիպ երաժիշտի ստեղծագործութիւնները եւ ճարտար նուազապետի կարողութիւնը անդամ մը եւս գրուատուեցան երաժշտական քրոնիկներու մէջ:

Ունեցանք, նոյնպէս Փարիզի մէջ, գաշնակի զեղեցիկ նուազահանդէսը Օր. Գոհարիկ Ղաղարոսեանի, որ ի յայտ բերաւ՝ թէ՛ իրը հզօր ու զգայուն նուազածու եւ թէ՛ իրը նուրբը ու ինքնատիպ երգահան՝ չքեղ ապագայի մը սահմանուած արուեստագիտուհիի մը ճոխ խառնուածքն ու ամուր հմտութիւնը:

Պոսթոնի մէջ Տիկին Առքին գաշնակահարուէին եւ Պոլսոյ մէջ Օր. Պապիկեան երգչուհին իրենց համերգներով հայ անունը պատուող փայլուն յաջողութիւններ գտան: Եւ ունեցանք յայտնութիւնը անզլիւրէն լեզուով զրող հայ տաղանդաւոր վիսողի մը, Ուլիւրմ Սարօեան: Իր առաջին զիրքը, հաւաքածու մը պատմըւածքներու (որուն ամենէն սիրուններէն մին է իր հօրը հայկական տիպարը զուրգուրանքով զծող էջը), ամենաջերմ զովեստներով ողջունուեցաւ ամերիկեան մէծաղոյն թերթերու մէջ հրատարակած յօդուածներով, որ կը հոչակեն Սարօեանը իրը նորայայտ արտակարգ տաղանդ մը ամերիկեան գրականութեան մէջ: